ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 35-Լ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒԺԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման պիլոտային ստանդարտ գործառնական ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մանուկ Մուրադյանին՝

1) ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման պիլոտային ստանդարտ գործառնական ընթացակարգը եռամսյա փորձարկման փուլ անցնելու նպատակով ներառել համապատասխան կրթական ծրագրերում.

2) կիրառման արդյունքներով ներկայացնել զեկույց՝ դրանում ներառելով նաև առաջարկություններ ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման պիլոտային ստանդարտ գործառնական ընթացակարգի հնարավոր լրամշակումների վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Մկրտչյանին՝ ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման

պիլոտային ստանդարտ գործառնական ընթացակարգի փորձնական փուլի արդյունքներով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հաստատմանը ներկայացնել ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման ստանդարտ գործառնական ընթացակարգի վերջնական տարբերակը:

4. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

07.05.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«07» մայիսի 2025թ.
Թիվ 35-Լ հրամանի

ՊԻԼՈՏԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒԺԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պիլոտային ստանդարտ գործառնական ընթացակարգը (այսուհետ՝ ստանդարտներ) նախատեսված է ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման ժամանակ առաջնորդվելու համար, դրանք պատշաճ գործադրելու նպատակով, հաշվի առնելով, որ խնդրահարույց է ճշգրիտ կանխատեսել, թե կոնկրետ իրավիճակում, որ ուժային միջոցն է անհրաժեշտ գործադրել կամ կանխորոշել դրա գործադրման ուժգնության աստիճանը:

2. Սույն ստանդարտները մշակվել են «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքներով նախատեսված՝ ոստիկանության և ոստիկանության գվարդիայի լիազորությունների պատշաճ իրականացման համար՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու, իրավախախտումներին հակազդելու, պաշտպանության կարիք ունեցող անձանց օգնելու, ինչպես նաև հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման նպատակով:

3. Սույն ստանդարտները ոստիկանության ծառայողների կողմից օգտագործվում են ուժային միջոցի հնարավորինս պատշաճ կիրառման վերաբերյալ օբյեկտիվ, մասնագիտական և անկողմնակալ որոշում կայացնելու համար:

4. Սույն ստանդարտներով նկարագրված չեն այն բոլոր իրավիճակները, որոնք կարող են առաջանալ ոստիկանության ծառայողի կողմից իր լիազորություններն իրականացնելիս: Նման իրավիճակներում ոստիկանության ծառայողը ողջամտորեն գործում է իր հայեցողությամբ՝ հիմնավորելով իր կողմից գործադրված ուժային միջոցների անհրաժեշտությունը, իրավաչափությունը և համաչափությունը, ինչպես նաև այն, որ ուժային միջոցների գործադրումն ուղղված էր հասարակության և մարդու շահերի պաշտպանությանը:

5. Սույն ստանդարտները բացատրական ու տեղեկատվական բնույթի են և մշակվել են օրենսդրության հիման վրա:

6. Ոստիկանության ծառայողն իրավասու է ուժային միջոցներ գործադրել միայն դրանց հմտություններին տիրապետելու հատուկ պատրաստություն անցնելուց հետո, որը պարտադիր ներառում է նաև սույն ստանդարտների ուսումնասիրումը:

7. Սույն ստանդարտներում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ուժային միջոց՝** ֆիզիկական ուժ, հատուկ միջոց, հրազեն, հատուկ տեխնիկա, ինչպես նաև անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում սպառնացող վտանգի բնույթին և աստիճանին համաչափ գործադրվող միջոց,

2) **ֆիզիկական ուժ՝** ցանկացած ֆիզիկական ուժային ներգործություն, այդ թվում՝ պայքարի մարտական՝ ցավեցնող, խեղդող և այլ հնարքներ, պարանոցի սեղմում,

3) **հատուկ միջոց՝** ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված սարքավորումների և առարկաների ամբողջություն, որոնք իրենց կառուցվածքով և նշանակությամբ նախատեսված են անձանց պաշտպանելու, նրանց գործողությունները սահմանափակելու և ճնշելու համար,

4) **հրազեն՝** ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրաձգային զենք, անձանց պաշտպանելու, նրանց գործողությունները սահմանափակելու և ճնշելու համար,

5) **հատուկ տեխնիկա՝** ոստիկանության գվարդիայի սպառազինության մեջ ընդգրկված՝ օպերատիվ-ծառայողական խնդիրներ լուծելու համար նախատեսված տեխնիկա,

6) **անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում սպառնացող վտանգի բնույթին և աստիճանին համաչափ գործադրվող միջոց՝** ոստիկանության ծառայողի ձեռքի տակ գտնվող կամ հասանելի առարկաներ, որոնք կարող են օգտագործվել անձանց պաշտպանելու, նրանց գործողությունները սահմանափակելու, ճնշելու և խոցելու համար,

7) **մարդու անվտանգություն՝** մարդու կյանքի, առողջության և սահմանադրական այլ իրավունքների ու ազատությունների պաշտպանվածություն,

8) **իրավախախտ՝** իրավախախտում կատարելու մեջ կասկածվող կամ իրավախախտում կատարած անձ,

9) **հնազանդ վարքագիծ՝** իրավախախտի պահվածք, որը դրսևորվում է ոստիկանության ծառայողի հետ համագործակցությամբ,

10) **պասիվ անհնազանդ վարքագիծ՝** իրավախախտի պահվածք, որը դրսևորվում է առանց փախուստի փորձի, սպառնալիքի, ֆիզիկական դիմադրության, ինչպես նաև անգործությամբ կամ պասիվ գործողություններով,

11) **ակտիվ անհնազանդ վարքագիծ՝** իրավախախտի պահվածք, որը դրսևորվում է ոստիկանության ծառայողին ֆիզիկական դիմադրություն ցույցաբերելով,

12) **ագրեսիվ անհնազանդ վարքագիծ՝** իրավախախտի պահվածք, որի արդյունքում վնաս է պատճառել կամ կարող է պատճառվել ոստիկանության ծառայողի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը,

13) **իրական սպառնալիք՝** սպառնալիք, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ իրավախախտը որևէ կերպ կարող է վնաս պատճառնել անձանց, այդ թվում՝ ոստիկանության ծառայողների կյանքին կամ առողջությանը,

14) **զինված հարձակում կամ դիմադրություն՝** ցանկացած տեսակի հրազենով կամ զենքով կամ դրանց ակնհայտ նմանվող առարկայով կամ կյանքից զրկելու կամ առողջությանը լուրջ վնաս պատճառելու համար պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի կամ նյութի գործադրմամբ կատարվող հարձակում կամ դիմադրություն,

15) **խեղդող հնարք՝** կոկորդի կամ շնչափողի վրա գործադրվող ճնշում, որը կարող է դժվարացնել կամ կասեցնել շնչառությունը,

16) **պարանոցի սեղմում՝** քնային կամ գլխուղեղի արյուն մատակարարող այլ զարկերակների սեղմում, որը կարող է դժվարացնել կամ սահմանափակել արյան մատակարարումը գլխուղեղին և դառնալ գիտակցության կորուստի պատճառ,

17) **առաջին օգնություն՝** վնասվածքների ժամանակ մարդու կյանքը փրկելու և բարդությունները կանխելու նպատակով ցուցաբերվող պարզագույն, անհապաղ և նպատակահարմար օգնության միջոցառումներ, որոնք իրականացվում են մինչև բուժաշխատողների ժամանելը և տուժածին բժշկական հաստատություն հասցնելը:

8. Ուժային միջոցների գործադրման նպատակն է մարդու, այդ թվում՝ ոստիկանության ծառայողի անվտանգության ապահովումը, հանցագործությունների ու վարչական իրավախախտումների կանխումը, խափանումը, իրավախախտի ձերբակալումը և ոստիկանության լիազորությունների պատշաճ իրականացումը:

9. Ուժային միջոցներ գործադրելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են առաջնորդվել ոստիկանության գործունեության և հարկադրանք կիրառելու սկզբունքներով:

10. Ուժային միջոցների գործադրումը պետք է լինի օրինական, ուղղված լինի մարդու իրավունքների և ազատությունների ապահովմանը, չնվաստացնի նրա պատիվն ու արժանապատվությունը, ոչ կամայականորեն, համաչափ, պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

11. Ուժային միջոցի գործադրումը համարվում է օրինական, եթե այն կիրառվում է օրենքով նախատեսված դեպքերում, գործադրման իրավաչափության պայմաններին և օրենքով նախատեսված այլ պահանջներին համապատասխան:

12. Արգելվում է պատժելու կամ վրեժխնդրության նպատակով, նսեմացնող որևէ եղանակով մարդու նկատմամբ ուժային միջոցների գործադրումը, ինչպես նաև ինքն իր համար վտանգ ստեղծող անձի նկատմամբ այնպիսի ուժի գործադրումը, որը կարող է հանգեցնել մահվան:

13. Ուժային միջոց ընտրելիս ոստիկանության ծառայողն առաջնորդվում է նվազագույնի սկզբունքով՝ անձի նկատմամբ գործադրելով այն ամենամեղմ ուժային միջոցը, որով հնարավոր է ապահովել ոստիկանության լիազորությունների պատշաճ իրականացումը: Այս սկզբունքը տարածվում է նաև կոնկրետ ուժային միջոցի տեսակի և ուժգնության ընտրության վրա:

14. Իրավախախտի նկատմամբ ուժային միջոցները գործադրվում են ուժգնության հետևյալ մակարդակներով.

1) ցածր, որը գործադրվում է պասիվ անհնազանդ վարքագիծ դրսևորող իրավախախտի նկատմամբ և կարող է նրան պատճառել ֆիզիկական ցավ կամ թեթև մարմնական վնասվածք,

2) միջին, որը գործադրվում է ակտիվ անհնազանդ վարքագիծ դրսևորող իրավախախտի նկատմամբ և կարող է նրան պատճառել ֆիզիկական ուժեղ ցավ կամ միջին ծանրության մարմնական վնասվածք,

3) բարձր, որը գործադրվում է ագրեսիվ անհնազանդ վարքագիծ դրսևորող իրավախախտի նկատմամբ և կարող է նրան պատճառել ծանր մարմնական վանսվածք կամ մահ:

15. Ուժային միջոցի գործադրումն անհապաղ պետք է դադարեցվի, ինչպես նաև արգելվում է ավելի խիստ ուժային միջոցի գործադրումը, եթե վերացել է դրա անհրաժեշտությունը:

16. Ոստիկանության ծառայողն ուժային միջոց գործադրում է ինքնուրույն, իսկ ստորաբաժանման կազմում՝ նաև տվյալ ստորաբաժանման հրամանատարի հրամանով: Ընդ որում՝ ակնհայտ անօրինական կամ ակնհայտ անհիմն հրամանը ենթակա չէ կատարման:

17. Ուժային միջոց գործադրելուց առաջ ոստիկանության ծառայողը (ստորաբաժանման դեպքում հրամանատարը) սեղմ ժամկետում պետք է գնահատի ստեղծված իրավիճակը և հասարակական կարգի պահպանության ու հասարակական անվտանգության ապահովման նպատակով որոշում կայացնի առանց ուժային միջոց գործադրելու կամ այն գործադրելով ստեղծված իրավիճակը կարգավորելու մասին:

18. Ստեղծված իրավիճակը գնահատելիս պետք է հաշվի առնել, որ գնահատման համար տեղեկությունները կարող են լինել սահմանափակ, ոչ հավաստի, անորոշ իրավիճակում և արագ փոփոխվող:

19. Ստեղծված իրավիճակի լարվածությունը վերացնելու, ինչպես նաև ուժային միջոցների գործադրման անհրաժեշտությունը նվազագույնի հասցնելու նպատակով ոստիկանության ծառայողն անվտանգ և հեռավոր դիրքից՝ անհրաժեշտության դեպքում պատսպարվելով կամ քողարկվելով, օգտագործում է համոզման, խորհրդատվության, խնդրանքի, հորդորման, նախազգուշացման և բանավոր հաղորդակցության այլ մեթոդներ, անհրաժեշտության դեպքում շահելով ժամանակ և հայցելով աջակցության հավելյալ ռեսուրսներ՝ ղեկավարներ և այլ ծառայողներ, այդ թվում՝ ճգնաժամային իրավիճակներում բանակցություններ վարելու հմտություններ ունեցող:

20. Բանակցություններ վարելիս ոստիկանության ծառայողների գործողությունները պետք է ունենան միասնական և փոխլրացնող մոտեցում:

21. Ոստիկանության մի քանի ծառայողների առկայության դեպքում, ստեղծված իրավիճակը սրելուց և իրավախախտին նյարդայնացնելուց խուսափելու նպատակով բանակցողի դերը ստանձնում է ոստիկանության այն ծառայողը, որն ավելի հաջող հաղորդակցություն է հաստատել իրավախախտի հետ:

22. Հաշվի առնելով, որ դեպքի ավարտից հետո անձն ավելի պարզ է գիտակցում դրա հանգամանքները և արդյունքները, ինչպես նաև տվյալ պահի հանգամանքներից ելնելով, ոստիկանության ծառայողը պետք է փորձի հանգստացնել ակտիվ կամ ագրեսիվ անհնազանդ վարքագիծ դրսևորող իրավախախտին, նրան մղել ողջամիտ որոշումների կայացման և արձագանքելու համար ողջամիտ ժամանակ տրամադրելով՝

1) հարցնել նրա կարիքների և ցանկությունների մասին՝ փորձելով գտնել ենթարկեցնելու այլընտրանքային տարբերակներ,

2) բացատրել իր գործողությունների բնույթը,

3) նրան առաջարկել ենթարկվելուն միտված այլընտրանքային տարբերակներ, այդ թվում՝ սահմանափակումներով,

4) հայտնել չենթարկվելու դեպքում իր կողմից ձեռնարկվելիք միջոցների և դրա հետևանքների մասին:

23. Ուժային միջոցների գործադրումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ բանավոր հաղորդակցության մեթոդով կամ ավելի մեղմ հարկադրանքի միջոցներով հնարավոր չէ նվազեցնել լարվածությունը, դադարեցնել բախումը և ապահովել ոստիկանության լիազորությունների պատշաճ իրականացումը:

24. Ոստիկանության ծառայողի կողմից ուժային միջոցի գործադրման անհրաժեշտությունը, այդ թվում՝ ուժային միջոցի տեսակը և ուժգնությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

1) անձանց, այդ թվում՝ ոստիկանության ծառայողների անվտանգության իրական սպառնալիքը և վտանգի աստիճանը,

2) իրավախախտի վարքագիծը, տարիքը, քաշը, հոգեկան և առողջական վիճակը, թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ գտնվելու կասկածը, նրա մոտ զենքի կամ այլ վտանգավոր առարկաների առկայությունը,

3) իրավախախտի կողմից կատարված իրավախախտման տեսակը և ծանրության աստիճանը, ոստիկանության ծառայողին դիմադրություն ցույց տալը, նրա վրա հարձակվելը, ձերբակալումից խուսափելը, փախուստի դիմելու ռիսկը և դրա հետևանքները,

4) ոստիկանության ծառայողի փորձը, հոգնածության աստիճանը, ուժային միջոցների գործադրման հմտությունների մակարդակը և պատրաստվածության աստիճանը, իրավախախտին վնաս պատճառելու հավանականությունը, իր և իրավախախտի միջև հեռավորությունը, ուժային հնարավորությունների ու քանակական հարաբերակցությունը,

5) տեղանքի առանձնահատկությունները (հրդեհավտանգ, պայթյունավտանգ և այլ վայրեր):

25. Ուժային միջոցի գործադրման անհրաժեշտությունը, այդ թվում՝ ուժային միջոցի տեսակը և ուժգնությունը որոշելիս ոստիկանության ծառայողների կողմից կարող են հաշվի առնվել նաև այլ հանգամանքներ:

26. Ոստիկանության ծառայողը պետք է գիտակցի, որ ուժային միջոցի գործադրման սխալ որոշում կայացնելու արդյունքում կարող է վտանգել իր կամ այլ անձանց անվտանգությունը:

27. Իրավախախտի վարքագիծը կարող է դրսևորվել հնազանդությամբ՝ ենթարկվելով ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին կամ անհնազանդությամբ՝ չենթարկվելով ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին: Անհնազանդությունն իր հերթին կարող է դրսևորվել պասիվությամբ, ակտիվությամբ կամ ագրեսիվությամբ:

28. Ոստիկանության ծառայողն նախքան ուժային միջոց գործադրելը պարտավոր է անձին հայտնել, որ ոստիկանության ծառայող է, նախազգուշացնել իր մտադրության մասին, բավարար ժամանակ տրամադրել նրան իր իրավաչափ պահանջը կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է վտանգել անձի, այդ թվում՝ ոստիկանության ծառայողի կյանքը, առողջությունը կամ ստեղծված իրավիճակում դա ողջամտորեն անհնար է անել: Ստորաբաժանման կազմում ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոց գործադրվելուց առաջ նշված գործողությունները կատարում է ոստիկանության տվյալ ստորաբաժանման հրամանատարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ ոստիկանության տվյալ ստորաբաժանման ծառայողներից մեկը:

29. Ոստիկանության ծառայողն ուժային միջոցի ընտրությունը կատարում է՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, իրավախախտման բնույթը, ինչպես նաև իրավախախտի գործողությունների վտանգավորության աստիճանը, այդ թվում՝ նրա կողմից ցույց տրվող դիմադրության բնույթը և ուժգնությունը:

30. Ոստիկանության ծառայողն ուժային միջոց գործադրելիս պետք է ձգտի նվազագույնի հասցնել իրավախախտին պատճառվող հնարավոր վնասը:

31. Հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ ուժային միջոցներ գործադրելն արգելվում է, բացառությամբ նրանց կողմից անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված ուղիղ և ակնհայտ ոտնձգություն կատարելու, զինված հարձակում գործելու, ինչպես նաև զինված դիմադրություն ցույց տալու դեպքերի: Հրազենի գործադրումն արգելվում է մարդկանց զգալի կուտակումների վայրերում, եթե առկա է այլ անձանց վնաս պատճառելու իրական վտանգ:

32. Օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպությունների տարածքներում թույլատրվում է ուժային միջոցներ գործադրել միայն դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով:

33. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ուժային միջոցի գործադրման արդյունքում մարմնական վնասվածք ստացած անձին ցուցաբերել առաջին օգնություն կամ միջոցներ ձեռնարկել այն ապահովելու համար՝ բժշկական հաստատությանն անհապաղ հայտնելով մարմնական վնասվածքի ու մահվան բոլոր դեպքերի մասին:

34. Ուժային միջոցի գործադրման հետևանքով մարմնական վնասվածքի կամ մահվան յուրաքանչյուր դեպքի մասին ոստիկանության ծառայողն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում գրավոր զեկուցում է իր անմիջական վերադասին՝ նշելով գործադրված ուժային միջոցի տեսակը և քանակը, գործադրման նպատակը, ժամանակը, պայմանները, անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները և իրավական հիմքերը, այն անձին, որի նկատմամբ այն գործադրվել է, մարմնական վնասվածք ստացած անձին առաջին օգնություն ցուցաբերելուն ուղղված միջոցները, մարմնական վնասվածք ստացած անձին կամ մահացածին տեղափոխելու վայրը, եթե տեղափոխումն իրականացրել են ոստիկանության ծառայողները, և այլ անհրաժեշտ տեղեկություններ: Տեխնիկական հնարավորության առկայության դեպքում ոստիկանության ծառայողը կարող է լուսանկարել կամ տեսանկարահանել մարմնական վնասվածքները և դրանք կցել զեկուցագրին:

35. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ոստիկանության այլ ծառայողի կողմից ուժային միջոցների ակնհայտ ոչ իրավաչափ գործադրմանն ականատես լինելու դեպքում հնարավոր միջոցներ ձեռնարկել այդ գործողությունները կանխելու կամ դադարեցնելու համար և զեկուցել իր անմիջական վերադասին:

36. Ուժային միջոցների ոչ իրավաչափ գործադրումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

37. Անձնական անվտանգության ապահովման նպատակով ոստիկանության ծառայողն իրավունք ունի օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ՝ սաղավարտ, վահան, զրահաբաճկոն, հակագազ, ինչպես նաև ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված այլ միջոցներ:

38. Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում ոստիկանության ծառայողն իրավասու է գործել սպառնացող վտանգի բնույթին և աստիճանին համաչափ՝ անկախ գործադրվող միջոցից:

2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ

39. Ոստիկանության ծառայողը կարող է ֆիզիկական ուժ գործադրել, եթե բանավոր հաղորդակցության միջոցով հնարավոր չէ ապահովել ոստիկանության ծառայողի օրենքով նախատեսված լիազորությունների պատշաճ կատարումը:

40. Ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ գործադրում է, եթե անհրաժեշտ է.

1) կանխել կամ խափանել հանցանքի կամ վարչական իրավախախտման կատարումը,

2) ձերբակալել և իրավասու մարմին բերել անձին կամ անձին տեղափոխել հոգեբուժական կազմակերպություն կամ համապատասխան այլ բժշկական հաստատություն,

3) ապահովել ոստիկանության ծառայողի կամ այլ իրավասու անձի իրավաչափ պահանջի կատարումը:

41. Ֆիզիկական ուժ գործադրելու ընթացքում ոստիկանության ծառայողն իրավունք ունի կիրառել պայքարի մարտական հնարքներ, այդ թվում՝ ցավացնող:

42. Պայքարի ցավացնող մարտական հնարքները, որպես ֆիզիկական ազդեցության միջոց, կիրառվում են ֆիզիկական դիմադրություն ցույց տվող անձի վարքագիծը վերահսկելու համար: Այս նպատակով ոստիկանության ծառայողը չպետք է ծնկով, ոտքով կամ մարմնի ամբողջ քաշով սեղմի անձի պարանոցը, պետք է խուսափի վզից բռնելով անձին տապալել գետնին, իսկ գետնին տապալած անձին վերահսկելիս պետք է ճնշում գործադրի միայն անձի ուսերին, կրծքավանդակին կամ մեջքի միջին հատվածին:

43. Պայքարի ցավացնող մարտական հնարքներ կիրառելիս ոստիկանության ծառայողը պետք է հաշվի առնի.

1) իրավախախտի դիմադրությունը հաղթահարելու համար դրա կիրառման առավելագույն չափը,

2) իր օրինական պահանջի կատարումը դրա կիրառմամբ ապահովման հնարավորությունը,

3) իր օրինական պահանջների կատարման համար ընձեռնված հնարավորությունների բավարար լինելու հանգամանքը:

44. Ոստիկանության ծառայողն ակտիվ կամ ագրեսիվ անհնազանդ վարքագիծ դրսևորող իրավախախտի նկատմամբ պայքարի մարտական հնարքներ կիրառելիս իրավունք ունի օգտագործել խեղդող հնարքները կամ պարանոցի սեղմում՝ ֆիզիկական դիմադրություն ցույց տվող իրավախախտի վարքը զսպելու և վերահսկելու նպատակով, երբ.

1) բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նա կարող է վնաս պատճառել ոստիկանության ծառայողին կամ այլ անձանց,

2) իրավախախտն իրեն պահում է կոպիտ, ագրեսիվ և ցուցաբերում է դաժանություն:

45. Խեղդող հնարքներ կամ պարանոցի սեղմում գործադրելուց հետո ոստիկանության ծառայողը պարտավոր է ապահովել որակավորված բուժաշխատողի կողմից իրավախախտի բժշկական զննության իրականացում:

46. Ոստիկանության ծառայողը կարող է ֆիզիկական ուժ գործադրել նաև այն դեպքում, երբ իրավաչափ է համարվում հատուկ միջոցի կամ հրազենի գործադրումը:

3. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

47. Ոստիկանության ծառայողը կարող է գործադրել հատուկ միջոցներ, եթե բանավոր հաղորդակցության միջոցով կամ ֆիզիկական ուժի գործադրմամբ հնարավոր չէ

ապահովել օրենքով նախատեսված իր պարտականությունների պատշաճ կատարումը կամ երբ օրենքով իրավաչափ է համարվում հրազենի գործադրումը: Մարդու նկատմամբ հատուկ միջոցները գործադրվում են դրանց կիրառման համար սահմանված թույլատրելի չափանիշներին համապատասխան:

48. Ոստիկանության ծառայողը կարող է գործադրել հետևյալ հատուկ միջոցները՝

1) ձեռնաշղթաներ, կապող ցանցեր,

2) մահակներ,

3) ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր, ձեռքի ծխանռնակներ, ծխագլանակներ, ծխային կրակոցներ և արկեր,

4) էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակներ,

5) ծառայողական շներ (պահնորդական, հետախուզական, պարեկային),

6) արգելքներ քանդող գործիքներ (սարքեր) և տեխնիկա,

7) մարդկանց և տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու (արգելափակելու) տեխնիկական պատնեշներ, ճանապարհային ոզնիներ և փշալարեր,

8) ջրանետեր, այդ թվում՝ հատուկ ներկող նյութերի օգտագործմամբ, զրահամեքենաներ,

9) արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր, ռետինե գնդակներով փամփուշտներ,

10) նույնականացնող կամ տարբերակող ներկող նյութեր:

49. Ձեռնաշղթաներ, կապող ցանցեր, մահակներ, ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր, ձեռքի ծխանռնակներ, ծխագլանակներ, ծխային կրակոցներ և արկեր, էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակներ, նույնականացնող կամ տարբերակող ներկող նյութեր գործադրվում են՝

1) անձի, այդ թվում՝ ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը խափանելու կամ դրա իրական սպառնալիքը չեզոքացնելու համար,

2) իր լիազորություններն իրականացնող ոստիկանության ծառայողին կամ այլ իրավասու անձին ցույց տրվող դիմադրությունը ճնշելու համար,

3) զանգվածային անկարգությունները, ինչպես նաև հակահիրավական խմբակային այլ գործողությունները խափանելու համար,

4) պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների վրա կատարվող հարձակումը խափանելու համար,

5) ապօրինի պահվող անձանց, ապօրինաբար զբաղեցված շենքերը, շինությունները, տարածքներն ու այլ օբյեկտները, տրանսպորտային միջոցները ազատելու համար:

50. Ծառայողական շներ (պահնորդական, հետախուզական, պարեկային) գործադրվում են՝

1) անձի, այդ թվում՝ ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը խափանելու կամ դրա իրական սպառնալիքը չեզոքացնելու համար,

2) իր լիազորություններն իրականացնող ոստիկանության ծառայողին կամ այլ իրավասու անձին ցույց տրվող դիմադրությունը ճնշելու համար,

3) պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների վրա կատարվող հարձակումը խափանելու համար,

4) ապօրինի պահվող անձանց, ապօրինաբար զբաղեցված շենքերը, շինությունները, տարածքներն ու այլ օբյեկտները, տրանսպորտային միջոցները ազատելու համար:

51. Արգելքներ քանդող գործիքներ (սարքեր) և տեխնիկա գործադրվում են՝

1) պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների վրա կատարվող հարձակումը խափանելու համար,

2) ապօրինի պահվող անձանց, ապօրինաբար զբաղեցված շենքերը, շինությունները, տարածքներն ու այլ օբյեկտները, տրանսպորտային միջոցները ազատելու համար:

52. Մարդկանց և տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու (արգելափակելու) տեխնիկական պատնեշներ, ճանապարհային ոզնիներ և փշալարեր գործադրվում են՝

1) զանգվածային անկարգությունները, ինչպես նաև հակահիրավական խմբակային այլ գործողությունները խափանելու համար,

2) պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների վրա կատարվող հարձակումը խափանելու համար,

3) տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար, եթե այն վարող անձը դիտավորյալ չի ենթարկվում ոստիկանության ծառայողի կամ այլ իրավասու անձի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու իրավաչափ պահանջին:

53. Ջրանետեր, այդ թվում՝ հատուկ ներկող նյութերի օգտագործմամբ, զրահամեքենաներ գործադրվում են՝

1) զանգվածային անկարգությունները, ինչպես նաև հակահիրավական խմբակային այլ գործողությունները խափանելու համար,

2) պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների վրա կատարվող հարձակումը խափանելու համար,

3) ապօրինի պահվող անձանց, ապօրինաբար զբաղեցված շենքերը, շինությունները, տարածքներն ու այլ օբյեկտները, տրանսպորտային միջոցները ազատելու համար,

4) տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար, եթե այն վարող անձը դիտավորյալ չի ենթարկվում ոստիկանության ծառայողի կամ այլ իրավասու անձի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու իրավաչափ պահանջին:

54. Արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր, ռետինե գնդակներով փամփուշտներ գործադրվում են՝

1) զանգվածային անկարգությունները, ինչպես նաև հակահիրավական խմբակային այլ գործողությունները խափանելու համար,

2) պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների վրա կատարվող հարձակումը խափանելու համար,

3) ապօրինի պահվող անձանց, ապօրինաբար զբաղեցված շենքերը, շինությունները, տարածքներն ու այլ օբյեկտները, տրանսպորտային միջոցները ազատելու համար:

55. Արգելքներ քանդող գործիքներ (սարքեր) և տեխնիկա, մարդկանց և տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու (արգելափակելու) տեխնիկական պատնեշներ, ճանապարհային ոզնիներ և փշալարեր գործադրվում են ոստիկանության իրավասու ստորաբաժանման հրամանատարի հրամանով:

56. Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր, ձեռքի ծխանռնակներ, ծխագլանակներ, ծխային կրակոցներ և արկեր, ջրանետեր, այդ թվում՝ հատուկ ներկող նյութերի օգտագործմամբ, զրահամեքենաներ, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր, ռետինե գնդակներով

փամփուշտներ գործադրվում են ոստիկանության պետի կամ նրա տեղակալի հրամանով, իսկ ոստիկանության գվարդիայի ծառայողների դեպքում՝ նաև ոստիկանության գվարդիայի հրամանատարի կամ նրա տեղակալի հրամանով:

57. Ոստիկանության ծառայողը ձեռնաշղթա կամ կապող ցանց պարտավոր է գործադրել այնպես, որ դրանք լինեն ապահով ամրացված և չպատճառեն մարմնական վնասվածք կամ ֆիզիկական ցավ:

58. Ոստիկանության ծառայողը ձեռնաշղթա գործադրելիս պարտավոր է օգտագործել դրա սևեռիչները:

59. Երկու ժամ անընդմեջ ձեռնաշղթա գործադրելուց հետո ոստիկանության ծառայողը պարտավոր է ստուգել դրա սեղմման աստիճանը և անհրաժեշտության դեպքում թուլացնել օղակների սեղմումը:

60. Ձեռնաշղթան կամ կապող ցանցը որպես կանոն գործադրվում է «ձեռքերը թիկունքից» դիրքով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ «ձեռքերն առջևից» դիրքով:

61. Մահակը բացառապես գործադրվում է իրավախախտի կրծքավանդակին, որովայնին կամ մեջքին հրելու և ձեռքերին կամ ոտքերին հարվածներ հասցնելու համար՝ համաձայն ձև 1 սխեմայի: Թույլատրվում է մահակը գործադրել առանց սույն կետի պահանջների պահպանման, եթե առկա է իրական սպառնալիք և այլ միջոցներով հնարավոր չէ չեզոքացնել այն: Արգելվում է մահակով կատարել խեղդող հնարքներ կամ պարանոցի սեղմում:

62. Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը նախատեսված են մարդուն տարածության մեջ ապակողմնորոշելու համար, որոնք գործադրելուց առաջ իր և գործընկերների անվտանգությունն ապահովելու նպատակով ոստիկանության ծառայողն այդ մասին տեղեկացնելով վերջիններիս, ձեռնարկում է պաշտպանողական միջոցներ:

63. Ձեռքի ծխանռնակները, ծխագլանակները, ծխային կրակոցները և արկերը գործադրվում են ոստիկանության գործողությունների քողարկման կամ իրավախախտներին որևէ տարածքից հեռացնելու համար:

64. Էլեկտրահարող սարքերը և կայծային պարպիչները գործադրվում են իրավախախտի ակտիվ գործողությունները կասեցնելու կամ ինքնապաշտպանության նպատակով:

65. Էլեկտրահարող սարքերը և կայծային պարպիչները նախընտրելի է գործադրել իրավախախտի թիկունքից՝ մարմնի ստորին հատվածների ուղղությամբ:

66. Արգելվում է էլեկտրահարող սարքեր և կայծային պարպիչներ գործադրել հետևյալ դեպքերում.

1) իրավախախտն օգտագործում է դյուրավառ նյութեր կամ գտնվում է հրդեհավտանգ և պայթյունավտանգ վայրում,

2) երբ իրավախախտի ընկնելը կարող է հանգեցնել վնասվածքի կամ մահվան,

3) իրավախախտին տեղափոխելիս (ուղեկցելիս),

4) ուշագնացին ուշքի բերելու նպատակով.

5) ձեռնաշղթաներով կամ այլ միջոցներով շարժունակությունը սահմանափակված իրավախախտի նկատմամբ,

6) պասիվ անհնազանդ վարքագիծ դրսևորող իրավախախտի նկատմամբ,

7) իրավախախտին հարցաքննելու համար,

8) իրավախախտի մարմնի զգայուն հատվածների (գլխի, պարանոցի, սրտի, ստոծանու) վրա,

9) մեկից ավելի անգամ,

10) ջրային միջավայրում:

67. Արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակները գործադրվում են ինքնապաշտպանության նպատակով, երբ իրավախախտների կողմից դրսևորվում է ակտիվ կամ ագրեսիվ անհնազանդ վարքագիծ:

68. Տրանսպորտային միջոցում գտնվող իրավախախտի նկատմամբ արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակներ թույլատրվում է գործադրել միայն այն դեպքում, երբ առկա է իրական սպառնալիք:

69. Ծառայողական շներ օգտագործվում են նաև փախուստի դիմած իրավախախտին հայտնաբերելու համար:

70. Արգելվում է ծառայողական շների գործադրումը զանգվածային անկարգությունների և խմբակային գործողությունների խափանման ընթացքում:

71. Արգելվում է ծառայողական շները փոխանցել այլ անձանց կամ թողնել առանց հսկողության:

72. Արգելքներ քանդող գործիքները (սարքերը) և տեխնիկան գործադրվում են արգելանքների վրա անցքեր բացելու համար:

73. Արգելվում է պատանդների պահման վայրերում, ինչպես նաև մարդկանցից երկու մետրից պակաս հեռավորության վրա արգելքներ քանդող պայթուցիկ սարքավորումների գործադրումը:

74. Տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու միջոցները գործադրվում են տրանսպորտային միջոցով փախուստի փորձ կատարող իրավախախտին բռնելու կամ իրական սպառնալիք ստեղծող տրանսպորտային միջոցը հարկադրաբար կանգնեցնելու համար:

75. Արգելվում է տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու միջոցներ գործադրել մարդկանց փոխադրում իրականացնող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների, մոտոցիկլների, մոտոսայլակների և մոպեդների նկատմամբ, լեռնային ճանապարհներին կամ ճանապարհի սահմանափակ տեսանելիությամբ հատվածներում, երկաթուղային գծանցներում, թունելներում, կամուրջների, ուղետարների և էստակադաների վրա:

76. Մարդկանց հարկադրաբար կանգնեցելու միջոցները գործադրվում են մարդկանց անկառավարելի շարժը սահմանափակելու, ինչպես նաև պահպանվող օբյեկտներ ներխուժումը կանխելու համար:

77. Ջրանետերը գործադրվում են իրավախախտների խմբերը տարանջատելու և մեկուսացնելու համար:

78. Խորհուրդ չի տրվում ջրանետերի գործադրումը +10 C^0 ջերմաստիճանից ցածր եղանակային պայմաններում, իսկ 0 C^0 ջերմաստիճանից ցածր եղանակային պայմաններում արգելվում է դրանց գործադրումը:

79. Զրահամեքենաները գործադրվում են զինված իրավախախտների ձերբակալմանն ուղղված հատուկ միջոցառումներ իրականացնելու, իրավախախտների տեղաշարժի ճանապարհները փակելու, արգելապատնեշները ճեղքելու և ոստիկանության ծառայողներին դժվար անցանելի տարածքներ հասցնելու համար:

80. Արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը գործադրվում են իրավախախտների խմբակային գործողությունների կասեցման նպատակով:

81. Արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակներ, կրակոցներ և արկեր գործադրելիս հաշվի են առնվում քամու ուղղությունը, քանակը, տեղանքը, տեսակը, հրդեհավտանգ լինելը, հեռավորությունը:

82. Արգելվում է մարդկանց վրա արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակների, կրակոցների և արկերի նպատակաուղղված գործադրումը, ինչպես նաև բաց տեղանքում գործադրելու համար նախատեսված արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակների, կրակոցների և արկերի գործադրումը փակ տարածքներում:

83. Ռետինե գնդակներով փամփուշտները գործադրվում են ինքնապաշտպանության կամ իրավախախտների հակահիրավական գործողությունների կասեցման նպատակով:

84. Արգելվում է ռետինե գնդակներով փամփուշտներով նշանառու կրակ արձակել իրավախախտի գլխին, պարանոցին և սեռական օրգաններին, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ միջոցներով հնարավոր չէ վերացնել իրական սպառնալիքը:

85. Նույնականացնող կամ տարբերակող ներկող նյութերը գործադրվում են զանգվածային անկարգությունների ժամանակ իրավախախտին մակնշելու, հետագա նույնականացման և ձերբակալման, ինչպես նաև նրանց տեղաշարժը վերահսկելու նպատակով:

4. ՀՐԱԶԵՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ

86. Հրազենը համարվում է ամենախիստ ուժային միջոցը, որը ոստիկանության ծառայողը կարող է գործադրել միայն որպես կյանքի պաշտպանության վերջին միջոց:

87. Ոստիկանության ծառայողը հրազեն կարող է գործադրել մարդուն խոցելու կամ չխոցելու նպատակով:

88. Մարդուն խոցելու նպատակով ոստիկանության ծառայողը բացարձակապես հրազեն գործադրում է, եթե անհրաժեշտ է՝

1) անձի, այդ թվում՝ ոստիկանության ծառայողի կյանքի կամ առողջության դեմ ուղղված ուղիղ և ակնհայտ ոտնձգությունը, ներառյալ՝ զինված հարձակումը խափանելու համար,

2) իր լիազորություններն իրականացնող ոստիկանության ծառայողին կամ այլ իրավասու անձին ցույց տրվող զինված դիմադրությունը ճնշելու, ինչպես նաև նրա զենքին տիրելու փորձը խափանելու համար;

3) պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների վրա կատարվող զինված հարձակումը խափանելու համար,

4) զինված անձին վնասազերծելու համար, եթե նա հրաժարվում է կատարել հակահիրավական գործողությունները դադարեցնելու և իր մոտ եղած զենքը հանձնելու, ապօրինի պահվող անձանց ազատելու, ապօրինաբար զբաղեցված շենքերը, շինությունները, տարածքներն ու այլ օբյեկտները, տրանսպորտային միջոցները ազատելու կամ կանգնեցնելու վերաբերյալ ոստիկանության ծառայողի իրավաչափ պահանջները:

89. Մարդուն չխոցելու նպատակով ոստիկանության ծառայողը հրազեն կարող է գործադրել՝

1) տրանսպորտային միջոցը վնասելով կանգնեցնելիս, եթե այն վարող անձը ռազմական դրության իրավական ռեժիմի կամ արտակարգ դրության իրավական ռեժիմի

պայմաններում դիտավորյալ չի ենթարկվում ոստիկանության ծառայողի կամ այլ իրավասու անձի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու իրավաչափ պահանջին,

2) բնակելի կամ այլ տարածքներ, տրանսպորտային միջոցներ մուտք գործելուն խոչընդոտող ֆիզիկական արգելքները վերացնելիս,

3) հրազեն գործադրելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապի ազդանշան տալիս կամ օգնության կանչելիս:

90. Ոստիկանության ծառայողը հրազենը մերկացնում և այն բերում է պատրաստ վիճակի՝ նշանառելով իրավախախտին, եթե գտնում է, որ ստեղծված իրավիճակում անհրաժեշտ կլինի գործադրել այն, այսինքն՝ առկա են իրավախախտի նկատմամբ հրազեն գործադրելու օրենքով նախատեսված հիմքեր և ուժային միջոցների գործադրման միջին կամ բարձր ուժգնության մակարդակ:

91. Ոստիկանության ծառայողին արգելվում է անհիմն և անհարկի մերկացնել հրազենը, քանի որ դա կարող է ապակայունացնել իրավիճակը, անհանգստացնել կողմնակի անձանց, դառնալ պատահական կրակոց արձակելու պատճառ և ստեղծել այլ ծանր հետևանքներ:

92. Հրազենը չի կարող գործադրվել այն տարածքներում, որտեղ արտադրվում կամ պահվում են դյուրավառ կամ պայթուցիկ նյութեր:

93. Ոստիկանության ծառայողը պետք է խուսափի ընթացքի մեջ գտնվող տրանսպորտային միջոցից հրազեն գործադրելուց, եթե առկա է իրական սպառնալիքը վերացնելու այլ ողջամիտ միջոց:

94. Ոստիկանության գվարդիայի ծառայողը հատուկ տեխնիկա կարող է գործադրել հակաահաբեկչական գործողությունների իրականացմանը մասնակցելիս, ինչպես նաև ռազմական դրությամբ պայմանավորված առաջադրանքներ կատարելիս

95. Հատուկ տեխնիկան գործադրվում է հրազենի գործադրման իրավաչափության պայմաններին համապատասխան, երբ հրազենի գործադրմամբ հնարավոր չէ ապահովել ոստիկանության գվարդիայի լիազորությունների պատշաճ իրականացումը:

96. Հատուկ տեխնիկան գործադրվում է Ոստիկանության պետի հրամանով:

Սխեմա 1

ՍԽԵՄԱ 1



ԿԱՆԱՉ	ԴԵՂԻՆ	ԿԱՐՄԻՐ
ՍՏԱՅՎԱԾ ՎՆԱՍՎԱԾՔԻ ՆՎԱՃԱԳՈՒՅՆ ՄԱԿԱՐԴԱԿ: ՎՆԱՍՎԱԾՔՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ Է, ՔԱՆ ԵՐԿԱՐԱՏԵՎ, ՍԱԿԱՅՆ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ:	ՄԻՋԻՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԼՈՒՐՋ ՎՆԱՍՎԱԾՔ: ՎՆԱՍՎԱԾՔԸ ԵՐԿԱՐԱՏԵՎ Է, ԲԱՅՑ ԿԱՐՈՂ Է ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԼԻՆԵԼ: ԿԱՐՈՂ Է ՆԵՐԱՌԵԼ ՈՒՇԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ:	ՎՆԱՍՎԱԾՔԻ ՍՏԱՅՄԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ: ՎՆԱՍՎԱԾՔԸ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԵՐԿԱՐԱՏԵՎ, ՆԵՐԱՌԵԼ ԱՆԳԻՏԱԿԻՑ ՎԻՃԱԿ, ՀԱՆԳԵՑՆԵԼ ՄԱՀՎԱՆ: